ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ

ՆԱԽԱԳԾԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ուխտագնացություն դեպի Տաթևի վանք նախաձեռնությունը միտված է համախմբելու հայերին և Հայաստանի բարեկամներին հոգևոր և մշակութային ճանապարհորդության շուրջ: Միջոցառումը կկենտրոնանա Տաթևի՝ որպես հոգևոր, գիտական, մշակութային և սոցիալական կենտրոնի վերածննդի և հոգևոր-ազգային արժեքների շուրջ համախմբման գաղափարի վրա: Այն իրականացվում է Հայ Առաքելական Եկեղեցու օրհնությամբ և մի շարք հայկական բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

Ուխտագնացության ծրագիրը ներառում է՝

- Համատեղ աղոթք Սուրբ Պողոս-Պետրոս տաճարում հայ գերիների վերադարձի համար
- Արցախից բռնի տեղահանված երեխաների մկրտության արարողություն
- «ՄԵԿԵՆԱՍՆԵՐԻ ՈՍԿԵ ՇՂԹԱ. ՏԱԹԵՎԻ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԸ ԴԱՐԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ» ցուցահանդես
- Հոգևոր զրույցներ և միասնության ծես «Կենաց ծառի» շուրջ
- Տաթևի համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերի ներկայացում
- Մշակութային ծրագիր (երաժշտական կատարումներ, պարային ներկայացումներ, վարպետաց դասեր)
- Հարիսայի պատրաստում և ավանդական հյուրասիրություն
- Տեղական արտադրանքի և արհեստների տոնավաճառ

ԽՆԴԻՐՆԵՐ

- Ուխտագնացության ավանդույթի արմատավորում և Տաթևի վանքի դերի վերահաստատում որպես հոգևոր և մշակութային փոխազդեցության կենտրոն
- Հանրային ուշադրության հրավիրում հայ գերիների հարցին և նրանց ազատ արձակման հրատապ կոչ
- Տարածաշրջանի զարգացման ծրագրերի իրականացում
- Արցախից տեղահանված ընտանիքների աջակցություն և հոգևոր միասնության ապահովում
- Հայկական մեկենասության ավանդույթների շարունակականության ապահովում և խրախուսում

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ

ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

- ✓ Ուխտագնացության մասնակիցներ (ավելի քան 1000 մարդ)
- ✓ Տաթև համայնքի բնակիչներ, այդ թվում՝ Տաթև համայնքում բնակվող Արցախից բռնի տեղահանված ընտանիքներ
- ✓ Տեղական արտադրողներ և արհեստավորներ
- ✓ Գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ

ԱՆՈՒՂՂԱԿԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

- ✓ Սյունիքի մարզի բնակչություն
- ✓ Հայկական մշակութային ժառանգության պահպանման նախաձեռնություններ
- ✓ Տարածաշրջանի զբոսաշրջային ենթակառուցվածք

ԲՅՈՒՋԵ

Միջոցառման ընդհանուր բյուջեն, ներառյալ ուխտագնացության ծախսերը, ինչպես նաև «Կյանքի ծառի» շրջակայքի բարեկարգումն ու այգու խնամքը հաջորդ տարվա համար, կազմում է՝

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 80 000 ԱՄՆ դոլար

ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համագործակիցներ	**«Տաթևեր» ճոպանուղի** **«Տաթևի վերածնունդ» հիմնադրամ**
Աշխարհագրություն	Սյունիքի մարզ, Տաթև, Հալիձոր
Իրականացման ժամկետ	**Մայիսի 31, 2025թ.**

ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

- Ուխտագնացության ամենամյա բնույթ, որը հիմնադրվել է 2024թ. և շարունակվելու է հետագա տարիներին
- Հոգևոր արժեքների շուրջ համախմբում
- Տաթևի համայնքի զարգացմանն ուղղված երկարաժամկետ ծրագրերի ներկայացում և իրականացում
- Մեկենասության ավանդույթների խրախուսում և շարունակականության ապահովում
- Հայ Առաքելական Եկեղեցու և հեղինակավոր բարեգործական կազմակերպությունների երկարաժամկետ համագործակցություն
- Տեղական համայնքների ներգրավվածություն և սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը նպաստում